Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հուլիսի 16-ի N 1063 - Ն որոշման

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՁԿՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պահանջներով կարգավորվում են Եվրոպական միության առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում գրանցման համար ձկնաբուծական տնտեսություններին ներկայացվող պահանջների հետ կապված հարաբերու-թյունները:

2. Եվրոպական միության առևտրի վերահսկման և փորձագիտական համակարգում գրանցման համար սննդամթերքի և կերի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառներում վերահսկողություն իրականացնող լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրության սահմանած կարգի համաձայն՝ իրականացվում է ստուգում սույն հավելվածով սահմանված պահանջների համապատասխանելիության նկատմամբ:

2. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ (ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ՊԱՀԱՆՋՆԵՐ

3. Ձկան բուծման և աճեցման համար օգտագործվում են ջրավազաններ և ջրային աղբյուրներ, որոնք, ըստ ջրի աղային և գազային բաղադրության,

համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:

4. Ջրավազանների կոնստրուկցիայով պետք է նախատեսված լինի տարվա տաք եղանակին արտադրող ձկների և արդյունագործական նպատակով բուծվող վտառի համար նախատեսված հատուկ լճակների և աճեցման համար նախատեսված լճակների հուների լրիվ չորացում ապահովող միջոցառումների անցկացման հնարավորություն:

5. Բոլոր ջրավազանները պետք է ունենան անկախ ջրամատակարարում և սարքավորված լինեն հիդրոտեխնիկական կառուցվածքներով, որոնք խոչընդոտում են այնտեղ կեղտոտ ձկան և այլ ջրային օրգանիզմների՝ ձկան հիվանդություններ փոխանցողների ներթափանցումը:

6. Տոհմային ձկան պահման համար նախատեսված ջրավազանները պետք է տեղակայված լինեն ջրավազանների մակարդակից բարձր մնացած ձկան (պարարտացման համար նախատեսված լճակներ) պահման համար և ունենան անկախ ջրամատակարարում:

7. Կարանտինացման համար օգտագործվող ջրավազանները կամ ձկան ժամանակավոր պահման համար նախատեսված լճակ-ձկնաբուծարանները պետք է տեղակայված լինեն ձկնաբուծական տնտեսության ջրային համակարգի վերջում, և դրանցից ջրթողն իրականացվի լճակ-պարզարան, որը կապակցված չպետք է լինի ձկնաբուծական տնտեսության մնացած ջրավազանների հետ՝ վարակազերծման համար կամ ձկնատեսական նշանակություն չունեցող ջրավազաններին:

8. Ձկնաբուծական տնտեսությունների բոլոր ջրավազանները պետք է օգտագործվեն բացառապես ըստ իրենց ուղիղ նշանակության:

9. Ձկնաբուծական տնտեսությունում պետք է լինի լաբորատորիա իխտիոպաթոլոգիական հետազոտությունների անցկացման համար, ինչպես նաև ավազաններ կամ տաշտեր՝ ձկների բուժիչ և կանխարգելիչ մշակման համար:

10. Կարանտինացման համար օգտագործվող ջրավազանները, դրանց մեջ ձկան բացակայության դեպքում պետք է պահվեն առանց ջրի, սակայն ամբողջովին պատրաստ՝ դրանցում ցանկացած ժամանակ ձուկը տեղավորելու համար:

11. Ձկնաբուծական տնտեսություններում պետք է անցկացվեն միջոցառումներ՝ ջրավազաններում ձկնակեր ջրլող թռչունների կուտակումն արգելելու համար:

12. Ջրավազանների մերձափնյա գոտին անհրաժեշտ է պահել պատշաճ վիճակում, անցկացնել գույքի, սարքավորումների և կառուցվածքների, ինչպես նաև իրականացնել ձկան անասնաբուժասանիտարական փորձաքննության, մշակման և գույքի ու սարքավորման պահպանման վայրերի կանխարգելիչ ախտահանում:

13. Յուրաքանչյուր ջրավազանին կամ ջրավազանների խմբին պետք է հատկացնել առանձին գույք, սարքավորում, որսալու գործիքներ, լողացող միջոցներ և այլն: Պլանային միջոցառումներն անցկացնելուց հետո գույքը, սարքավորումը, որսալու գործիքները և արտահագուստը պետք է ենթարկվեն կանխարգելիչ ախտահանման:

14. Ձկնաբուծական տնտեսությունում պետք է լինեն սարքավորված հակամակաբուծային տաշտեր՝ այլ ջրավազաններ փոխադրման համար նախատեսված ձկան կանխարգելիչ մշակման համար:

15. Ձկնաբուծական տնտեսությունում վարվում է թղթաբանություն՝ իխտիոպաթոլոգիական հետազոտությունների, ջրի հիդրոքիմիական հետազոտությունների և կազմակերպության անասնահամաճարակային իրավիճակի մասին:

16. Կենդանիների բեռնման (բեռնաթափման) օբյեկտները, ինչպես նաև սարքավորումները պետք է նախագծված և կառուցված լինեն այնպես, որ հնարավոր լինի խուսափել կենդանիներին վնասվածք և վնաս հասցնելուց, ինչպես նաև ապահովել դրանց անվտանգությունը:

3. ԿԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ (ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

17. Պահեստները, սառնարանային խցիկները պետք է սարքավորված լինեն դարակաշարերով և տակդիրներով, որոնցով բացառվում է պահպանվող ապրանքների՝ հատակի, պատերի, սարքավորումների հետ շփման հնարավորությունը:

18. Պահեստները, սառնարանային խցիկները պետք է սարքավորված լինեն պահպանման անհրաժեշտ ամենօրյա հսկողության հնարավորությամբ ջերմախոնավային ռեժիմի ապահովման համար անհրաժեշտ սարքերով և սարքավորումներով:

4. ԿԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ, ՄԱԿՆՇՄԱՆԸ ԵՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

19. Հայաստանի Հանրապետությունում արտադրված, վերամշակված և փաթեթավորված կերը և կերային հավելումները պետք է մակնշված լինեն հայերենով:

20. Օգտագործվող կամ իրացվող կերի, կերի հետ շփվող նյութերի և կերային հավելումների մակնշումը հայերենով ներառում է հետևյալ տեղեկությունները՝

1) անվանումը, զտաքաշը կամ ծավալը.

2) կերի հիմնական բաղադրիչների ցանկը.

3) կերի մեջ օգտագործված կենսաբանական ակտիվ նյութերի, կերային հավելումների և անասնաբուժական դեղամիջոցների ցանկը (եթե այդպիսիք կան).

4) կենդանիների տեսակը և սեռահասակային խումբը, որոնց համար նախատեսված է կերը կամ կերային հավելումը.

5) արտադրության տարեթիվը, ամիսը, օրը, պահման պայմանները, առանձնակի ցուցումներ պահման մասին (եթե այդպիսիք կան) և պիտանիության ժամկետը.

6) կերի, կերի հետ շփվող նյութի և կերային հավելման օգտագործման վերաբերյալ ցուցումներ, եթե առանց դրանց այն չի կարող ըստ նշանակության օգտագործվել, առանձնակի հանձնարարականներ դրանց օգտագործման մասին (եթե այդպիսիք կան), տեղեկատվություն դրանց օգտագործման հակացուցումների վերաբերյալ (եթե այդպիսիք կան).

7) կերի, կերի հետ շփվող նյութի և կերային հավելման ծագման երկիրը, տվյալներ արտադրողի մասին (գտնվելու վայրը և ֆիրմային անվանումը).

8) «գենետիկորեն ձևափոխված կեր կամ կերային հավելում» մակնշումը, եթե կերի կամ կերային հավելման բաղադրության մեջ դրա պարունակությունը 0,9 տոկոսից բարձր է:

21. Արգելվում է օգտագործել կամ իրացնել պիտանիության ժամկետն անցած կեր:

22. Ձկնաբուծական տնտեսությունը պետք է ունենա կեր կամ կերային հավելում մատակարարած անձանց վերաբերյալ տեղեկատվություն:

5. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Ձկնաբուծական տնտեսությունը պետք է ունենա պետական գրանցում, ընդգրկված լինի սննդի շղթայի օպերատորների համար նախատեսված տվյալների բազայում:

24. Ձկնաբուծական տնտեսությունը պարտավոր է վարել և պահպանել համապատասխան փաստաթղթեր, որոնք հավաստում են, որ ձուկը բուծվել է Հայաստանի Հանրապետությունում՝ ներառյալ տեղական կամ ներմուծված ձկնկիթի (բեղմնավորված ձկնկիթի) ծագման և դրա հետագծելիության վերաբերյալ փաստաթղթեր:

25. Ձկների վարակիչ հիվանդությունների առաջացման վտանգի, հիվանդացության կամ անկման դեպքում պարտավոր է անհապաղ ծանուցել լիազոր մարմնին:

26. Սույն հավելվածի 25-րդ կետի վերաբերյալ տեղեկատվությունն անհրաժեշտ է գրանցել գրանցամատյանում:

27. Բուժման և զոոտեխնիկական նպատակներով պետք է կիրառվեն հորմոնալ արտադրանքների, բետա-անտագոնիստների, թիրեոստատիկ կամ այլ անասնաբուժական դեղամիջոցների և անասնաբուժական միջոցների օգտագործման պահանջները:

28. Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է օգտագործել պետական գրանցում ստացած անասնաբուժական դեղամիջոցներ:

29. Ձկների աճը խթանելու կամ մթերատվությունը բարձրացնելու նպատակով արգելվում է կենդանիների համար օգտագործել, ներարկել հակամանրէային դեղամիջոցներ:

30. Ձկնաբուծական տնտեսությունը պետք է վարի և պահպանի հետևյալ տվյալներն առնվազն երեք տարի ժամկետով՝

1) պահվող ձկների տեսակները, կատեգորիաներն ու քանակները (թվաքանակ, ծավալ կամ քաշ).
2) ձկների և դրանցից ստացված կենդանական ծագման արտադրանքի մուտքերը և ելքերը՝ նշելով դրանց ծագման կամ առաքման վայրը և ամսաթիվը.
3) կենդանիների առողջության վկայականները, որոնք անհրաժեշտ են ձկների տեղափոխման ժամանակ.
4) ձկների անկման տվյալները, ինչպես նաև հիվանդությունների հետ կապված խնդիրները.
5) կենսապաշտպանական միջոցառումները, հսկողությունները, բուժումները, փորձարկումների արդյունքները և այլ համապատասխան տվյալներ՝

ա. ձկների տեսակների և կատեգորիաների,

բ. արտադրության տեսակի,

գ. սննդամթերքի արտադրության տեսակը և չափը.

6) անասնաբույժի ստուգայցերի արդյունքները:

31. Ձկնաբուծական տնտեսությունը պետք է պահպանի ձկների տեղափոխմանը առնչվող հետևյալ գրանցումները երեք տարի ժամկետով՝

1) ձկների տեսակները, կատեգորիաներն ու քանակները (թվաքանակ, ծավալ կամ քաշ).
2) տեղափոխման ընթացքում ձկների անկման տվյալները՝ այնքանով, որքանով դա հնարավոր է համապատասխան տեղափոխման ձևի և ձկան տեսակի համար.
3) այն ձկնաբուծական տնտեսությունների տվյալները, որոնցում եղել է տվյալ փոխադրամիջոցը.
4) տեղափոխման ընթացքում իրականացված ջրի փոփոխումները՝ նշելով նոր ջրի աղբյուրները և հին ջրի թափվելու վայրերը.
5) փոխադրամիջոցի մաքրման և ախտահանման տվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

17.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ